է մտահոգությունը այն մարդկանց, որոնք ինչ որ վատ նշաններ են տեսնում կատարող դէպքերի մէջ: Ընդհակառակը, Կովկասեան Հայաստանի անկախութեան ճանաչումը ինքնին ապացոյց է տաճկահայկական դատի նպաստաւոր լուծման, որովհետև անկարելի է երևակայել մի Հայաստան, որ կազմուած լինի միայն ռուսական կամ միայն տաճկական Հայաստանից: Հայաստանը կամ պէտք է լինի միացեալ, ամբողջական՝ ազատ ելք ունենալով դէպի ծով, կամ նրա անկախութիւնը կը լինի լոկ անուանական և կը դառնայ պատիժ հայ աշխատաւորութեան գլխին: Ռուսահայաստանի անկախութեան ճանաչումից յետոյ, միացեալ Հայաստանի անկախութեան գոյութիւնը կարելի է համարել ապահովուած, և վաղը, միւս օր, երբ քննութեան առնուի տաճկական խնդիրը, անշուշտ, առաջին հերթին կը վաւերացուի նաև Տաճկահայաստանի անկախութեան ու երկու հատուածների միութիւնը: Ճիշտ է, հայ ժողովուրդը խոստումներ և հիասթափութիւններ շատ է տեսել, բայց մեր դատողութիւնների հիմքը կազմում են ոչ թէ խոստումները, այլ իրական ուժերի փոխյարաբերութիւնն ու քաղաքական դէպքերի դասաւորութիւնը:

Կասկածամիտները ասում են, թէ կովկասեան պետութիւնների անկախութեան ճանաչումը յետին նպատակներ ունի, թէ մեծ պետութիւնները դրանով կամենում են բոլշևիկների դէմ հակաոյժ ստեղծել: Կարող է պատահել, չենք վիճում: Անշուշտ, պետութիւնները հայերի, վրացիների ու թաթարների գեղեցիկ աչքերի համար չէ, որ ճանաչում են նրանց անկախութիւնը. քաղաքականութեան մէջ, այո՛, ոչ թէ զգացմունքը, այլ շահն է դեր կատարողը: Ինչ ուզում են պետութիւնները մտածեն, բայց մի՞թէ դրանից նսեմանում է մեր անկախութեան արժէքը: Այս կամ այն աւանտիւրայի մէջ ընկնելը կամ չընկնելը ամենից առաջ մեզնից է կախուած. բոլշևիկեան Ռուսաստանը մեզ համար նոյնպիսի արտաքին ոյժ է, որպիսի արտաքին ոյժ են և ուրիշ պետութիւնները, և մեր քաղաքական հասունութիւնից է կախուած մեր ապագայ արտաքին, ինչպէս և ներքին քաղաքականութիւնը: Հայ աշխատաւոր ժողովուրդը շատ է յոգնած ու քայքայուած, և նա մի՛ տենչանք միայն ունի այսօր — հանգիստ ու խաղաղ կեանք, որպէսզի ի վիճակի լինի անդորր սրտով անձնատուր լինել շինարար աշխատանքի: Կազմակերպուող Հայաստանը պէտք է լինի աշխատանքի ու ստեղծագործութեան երկիր: Հայ դէմոկրատիայի միակ փափագն է հնարաւորութիւն ունենալ կերտելու կուլտուրական ու տնտեսական բարիքներ և ամբողջ թափով մասնակցել քաղաքակիրթ մարդկութեան յառաջխաղացումին: Նա ուզում է հաշտ ապրել բոլոր ժողովուրդների հետ. նա չի խառնուի ուրիշի գործին, բայց և թոյլ չի տայ, որ ուրիշը միջամտի իր գործին:

Ընկերնե՛ր, մենք հասել ենք վերջին հանգրուանին: Այն, ինչ որ հայ ժողովուրդը ձևակերպել է իբրև անխախտ կամք, սկսում է իրականանալ: Ազատ Հայաստանն այլևս փաստ է ո՛չ միայն մեզ, այլ և ուրիշների համար: Այն, ինչ որ հայ աշխատաւորութիւնը իր արեան գնով է նուաճել, ընդունում ու հաստատում են նրանք, որոնց ձեռքին է գտնուում այսօր աշխարհի ղեկը, և՛ աւելի մեծ սիրով նրանք, որոնց պիտի անցնի վաղը պատմութեան ղեկավարութիւնը: Եւ եթէ մինչև այժմ մեզնից պահանջուել է յեղափոխական եռանդ և անձնազոհութիւն, այսուհետև մենք պէտք է ցուցահանենք քաղաքական հասունութիւն ու պետական շինարարութեան կարողութիւն: Կեանքը մեր առջև դնելու է նոր պահանջներ, և մեզնից է կախուած մեծ չափով անկախ Հայաստանի բարիք կամ չարիք դառնալը հայ ժողովրդի համար: Եւ ես հաւատում եմ, որ անկախ Հայաստանը չի փակուի նեղ պատեանի մէջ. հայ դէմոկրատիան հաւասար մէկ անդամը կը լինի համաշխարհային ազատ դէմոկրատիայի ընտանիքին: Հայաստանը կը լինի իսկապէս ազատ ու դէ-